# Մեր փոքրիկ աստղերի համերգը

Ամարաս Արուեստի Միութիւնը ուրախութեամբ ներկայացնում է մեր համայնքի երաժշտութեան մարզում շնորհալի փոքրիկների տարեկան համերգը, Լանջի երաժշտական դպրոցում, Կիրակի Յունիս 8ին, կէսօրից յետոյ ժամը 3ին:

«Երեխաները սիրում են բեմը եւ ելոյթ ունենալ: Մենք դա տեսնում ենք նրանց աչքերում,» ասում են ծրագրի պատասխանատուներից, Ամարասի խորհուրդի անդամ Մարալ Տէր Թորոսեանը եւ դաշնակահարուհի Մառինէ Մարգարեանը: Այս ծրագիրը ոչ միայն փոքրիկներին բեմ է բարձրացնում այլ առիթ է տալիս նրանց ծանօթանալու իրենց նման շնորհալի այլ փոքրիկների հետ: Ծանօթացւում եւ գնահատւում  են նաեւ ուսուցիչները իրենց աշխատանքի համար:

«Այս եւ նման ծրագրերի հասոյթը տրամադրում ենք երաժշտական կրթաթոշակի, Հայրենիքի եւ Սփիւռքի երաժշտութեան ուսանողներին օգնելու նպատակով: Աւելի քան տաս տարի առաջ հիմեցինք հայ ժողովրդական մեծ երգիչ Յովհաննէս Բաղալեանի անուան Երաժշտական հիմնադրամը այս նպատակով,» յայտնում է Ամարասի նախագահուհի, Արաքս Բաղալեանը:

Սոյն ծրագրին կարող են մասնակցել 8-18 տարեկանները, որոնք ունեն նւազագոյն երեք տարուայ երաժշտական կրթութիւն: Ոչ հայ մասնակիցները պիտի կատարեն հայ կոմպոզիտորի գործեր: Մանրամասնութիւնների համար կարելի է այցելել AmarasOnline.com.